02 Շաբաթաթերթ

Հայաստանի Հանրապետության ոստիկանություն

ISSN 1829-2526

Տպագրվում է 1990 թվականից

7 (1406) • 22 փետրվարի 2019 թ. • Գինը՝ 150 դրամ

www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am

Օպերատիվ խորհրդակցություն

Փետրվարի 16-ին ոստիկանությունում տեղի ունեցավ օպերատիվ խորհրդակցություն, որը վարում էր ոստիկանության պետ Վալերիյ Օսիպյանը:

Մինչ խորհրդակցությանն անցնելը ոստիկանության պետը վերջերս Երեւանի բանկերից մեկում ավազակային հարձակումը կանխելու եւ ծառայողական պարտականությունները բարեխղճորեն կատարելու համար պարգեւատրեց ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության ծառայող, ոստիկանության ենթասպա Սեւակ Բաղայանին:

Խորհրդակցության գլխավոր թեման հանրապետությունում օպերատիվ իրավիճակն էր:

Վալերիյ Օսիպյանը անդրադառնալով գրանցված դեպքերին ու բացահայտումների վիճակագրությանը՝ ստորաբաժանումների պատասխանատուներին հանձնարարեց անձնական ուշադրության կենտրոնում պահել սեփականության դեմ ուղղված հանցագործությունների կանխման, նախականխման եւ բացահայտման ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

Ներկայացվեցին նաեւ կոնկրետ տարածքային բաժինների բացահայտումների թվային տվյալներ, որոնք գոհացուցիչ չեն: Ստորաբաժանումների ղեկավարներին հանձնարարվեց սեղմ ժամկետում իրականացնել անհրաժեշտ բոլոր միջոցառումները՝ իրավիճակը շտկելու եւ բացահայտումների դրական դինամիկա ապահովելու համար:

Վալերիյ Օսիպյանը հանձնարարեց անցնել ուժեղացված ծառայության:

էջ 2

Հանուն անվտանգ երթեւեկության

Փետրվարի 16-ին ՀՀ ոստիկանության պետ Վալերիյ Օսիպյանի գլխավորությամբ աշխատանքային խորհրդակցություն տեղի ունեցավ ճանապարհային երթեւեկության անվտանգության բարձրացման թեմայով: Մասնակցում էին ճանապարհային ոստիկանության, կապի, տրանսպորտի եւ տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության, Երեւանի քաղաքապետարանի եւ բարձրագույն ուսումնական հաստատությունների ներկայացուցիչներ:

Ոստիկանության պետը, անդրադառնալով ճանապարհային երթեւեկության անվտանգության բարձրացման անհրաժեշտությանը, ընդգծեց, որ խնդրի կարգավորումը հնարավոր է պատկան մարմինների համատեղ աշխատանքի արդյունքում:

Խորհրդակցության մասնակիցները ներկայացրին ոլորտի բարելավմանը վերաբերող ե՛ւ կարճաժամկետ, ե՛ւ երկարաժամկետ լուծում պահանջող առաջարկներ: Քննարկվեցին մայրաքաղաքի կենտրոնական հատվածում տրանսպորտային միջոցների բեռնաթափմանը, կանոնավոր ուղեւորափոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցների բարելավմանը, ճանապարհաշինարարական նախագծերին, ինչպես եւ ոլորտը կարգավորող օրենսդրությանը առնչվող հարցեր: Խորհրդակցության մասնակիցները ներկայացրին միջազգային փորձը՝ համեմատականներ անցկացնելով ճանապարհային երթեւեկության ոլորտում Հայաստանում առկա խնդիրների հետ:

Որոշում կայացվեց ստեղծել միջգերատեսչական հանձնաժողով, որն առավել խորքային կուսումնասիրի ոլորտը, կառաջարկի խնդիրների լուծման իրատեսական տարբերակներ:

Ապօրինություններ ԵՊՀ-ում

Նախորդ տարվա նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին Երեւանի պետական համալսարանում տեղի ունեցած չարաշահումների վերաբերյալ համացանցում առկա հրապարակումների իսկությունը ստուգելու նպատակով ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության կոռուպցիայի եւ տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների հակազդման վարչության ծառայողներն իրականացրին ստուգումներ:

Այդ ընթացքում ՀՀ գլխավոր դատախազությունից ոստիկանություն ուղարկվեցին պետական վերահսկողական ծառայության կողմից Երեւանի պետական համալսարանում իրականացված ուսումնասիրությունների նյութերը: Նյութերում առկա էին համալսարանում կատարված առանձնապես խոշոր չափերի չարաշահումների վերաբերյալ տեղեկություններ: Տեղեկությունները ստուգելու նպատակով ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչությունում նախապատրաստված նյութերի ընթացքում հայտնաբերվեցին մայր բուհում կատարված մի շարք չարաշահումներ:

էջ 2

Հակակոռուպցիոն պայքարը շարունակվում է

Ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության կոռուպցիայի եւ տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների հակազդման վարչության ծառայողները, համագործակցելով տարածքային ստորաբաժանումների գործընկերների հետ, բացահայտեցին կոռուպցիոն հանցագործություններ:

Օպերատիվ տեղեկություններից մեկը պաշտոնատար անձի կողմից թույլ տրված չարաշահումների վերաբերյալ էր:

Փետրվարի 4-ին ոստիկանության Վայոց ձորի մարզային վարչության եւ Վայքի բաժնի ծառայողների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքում պարզվեց, որ Վայք քաղաքի հիմնական դպրոցի տնօրենը, օգտագործելով պաշտոնեական դիրքը, որդուն հրամանագրել է որպես սոցիալական մանկավարժ, իսկ հարսին՝ գնումների համակարգող: Երկուսն էլ 2017 թ. հունվարից 2018 թ. դեկտեմբեր փաստացի աշխատանքի չեն ներկայացել, իսկ նրանց անվամբ դուրս գրված երկուսուկես միլիոն դրամից ավելի աշխատավարձը յուրացրել է դպրոցի տնօրենը:

էջ 3

Բացահայտվել են յուրացնելու դեպքեր

Ազգային անվտանգության ծառայությունից ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչություն յուրացման վերաբերյալ հերթական օպերատիվ տեղեկությունները ստացվեցին: Տեղեկությունների հիման վրա ձեռնարկվեցին օպերատիվ-հետախուզական միջոցառումներ՝ համագործակցելով ոստիկանության Շիրակի մարզային վարչության եւ Արթիկի բաժնի գործընկերների հետ:

Պարզվեց, որ Արթիկի թիվ 3 ավագ դպրոցի նախկին տնօրենը, օգտագործելով պաշտոնեական դիրքը, 2011-2018 թթ. որպես կրթօջախի պահակ, էլեկտրիկ-փականագործ է հրամանագրել տարբեր անձանց, որոնք փաստացի աշխատանքի չեն ներկայացել, իսկ նրանց անվամբ դուրս գրված աշխատավարձերը՝ երկուսուկես միլիոն դրամ, տնօրենը յուրացրել է:

Պարզվել է նաեւ, որ դպրոցի տնտեսվարը 2012 թ. մի քանի ամսով արտագնա աշխատանքի է մեկնել Ռուսաստան, սակայն այդ ընթացքում նրա անվամբ աշխատավարձ է դուրս գրվել եւ յուրացվել:

Կոռուպցիոն բնույթի հանցագործությունների բացահայտման շրջանակներում ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության ծառայողներն օպերատիվ տվյալներ էին ստացել, որ Գառնի համայնքի թիվ 1 հիմնական դպրոցի տնօրենը չարաշահումներ է արել:

Գլխավոր վարչության եւ Կոտայքի բաժնի ծառայողները համատեղ միջոցառումներով պարզել են, որ կրթօջախի տնօրենը 2004-2017 թթ. ամուսնուն հրամանագրել է որպես դպրոցի էլեկտրիկ-փականագործ, պահակ, հնոցապան: Ամուսինը փաստացի աշխատանքի չի ներկայացել, իսկ նրա անվամբ դուրս գրված աշխատավարձը, միլիոն 949 հազար դրամ, յուրացվել է:

Հարուցվել են քրեական գործեր:

Ավազակային հարձակումը բացահայտվեց

Դանակի ու ատրճանակի սպառնալիքով հափշտակել էին կես միլիոն դրամ, խմիչք, համակարգիչ, բջջային հեռախոս... էջ 2

Անառակաբարոն

Անառակաբարո գործողություններ կատարելու մեջ կասկածվողը օրեր անց մեկնել էր Ռուսաստան: էջ 3

Համակարգչային հանցագործություններ

Քաղաքացու բանկային քարտի հաշվից համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ հափշտակել էին գումար: էջ 6

Օպերատիվ խորհրդակցություն

Սկիզբը՝ էջ 1

Ոստիկանության ՔՀԳՎ անչափահասների գործերով եւ ընտանիքում բռնության կանխարգելման վարչությանը հանձնարարվեց, որպեսզի անչափահասի մասնակցությամբ յուրաքանչյուր դեպք առանձին ուսումնասիրվի ու քննության առարկա դառնա: Անհրաժեշտ է անչափահասների հետ առավել ինտենսիվ աշխատանքներ տանել, նրանց մասնակցությամբ իրավախախտումները բացառելու համար:

Խոսք գնաց նաեւ ոստիկանության կադրային քաղաքականության մասին: Ոստիկանության պետը նշեց, որ անհրաժեշտ է համակարգը համալրել բացառապես որակյալ կադրերով:

Ճանապարհային ոստիկանությանը հանձնարարվեց առավել ինտենսիվ ծառայություն կազմակերպել մայրաքաղաքում խցանումները բացառելու ուղղությամբ: Թեեւ ճանապարհատրանսպորտային պատահարների հետեւանքով զոհերի ու վիրավորների թվի նվազում կա, այնուհանդերձ ոստիկանության պետը հորդորեց չսահմանափակվել ձեռք բերվածով ու շարունակել միջոցառումները:

Խորհրդակցության ավարտին ոստիկանության պետի տեղակալները մասնակիցների հետ քննարկեցին Վալերիյ Օսիպյանի հանձնարարականների իրականացման ուղիներն ու միջոցները:

Նարեկ ՍԱՐԳՍՅԱՆ

Ավազակային հարձակումը բացահայտվեց

Դեկտեմբերի 13-ին Սպիտակ-Երեւան ավտոճանապարհի բենզալցակայանի աշխատողը ոստիկանության Սպիտակի բաժնում հաղորդում էր տվել, որ դիմակավորված երեք հոգի իրենցից պահանջել են փող, դանակով վնասել են ձեռքը, բաճկոնի գրպանից հափշտակել փողն ու դիմել են փախուստի:

Հարուցվեց քրեական գործ: Հանցագործությունը կատարած անձանց ինքնությունը պարզելու եւ հայտնաբերելու ուղղությամբ ոստիկանները համապատասխան միջոցառումներ էին ձեռնարկում, երբ օրեր անց կատարվեց մեկ այլ ավազակային հարձակում, այս անգամ՝ Վայոց ձորի մարզի Գետափ գյուղում: Տուժողներն ամուսիններ էին: Դեկտեմբերի 26-ի երեկոյան Գետափ գյուղում, չորս հոգի դիմակավորված մտել էին տուն, ծեծել նրանց, կապել ննջարանում, դանակի ու ատրճանակի սպառնալիքով հափշտակել կես միլիոն դրամ, խմիչք, համակարգիչ, բջջային հեռախոս ու պլանշետ:

Դեպքի վայր մեկնած ոստիկանները տնից ոչ հեռու հայտնաբերեցին դիմակներ, նաեւ գողոնի մի մասը: Դեկտեմբերի 27-ի առավոտյան, հանցագործությունը կատարելու կասկածանքով, Եղեգնաձորի Միկոյան փողոցից ոստիկանության Եղեգնաձորի բաժին բերման ենթարկվեցին նախկինում դատապարտված, Լոռու մարզի բնակիչներ Արեն Սարգսյանը եւ Բագրատ Ասոյանը, երրորդ մասնակիցը՝ Վանաձորի բնակիչ Արմենակ Մկրտչյանը, հայտնաբերվեց եւ ոստիկանություն բերման ենթարկվեց հունվարի 16-ին: Երեքն էլ կալանավորվեցին:

Պարզվեց, որ դեկտեմբերի 13-ին Սպիտակում կատարված ավազակային հարձակումը նույնպես նրանց ձեռքի գործն է:

Նախաքննությունը շարունակվում է:

Գոռ ՎԱՆՅԱՆ

Ապօրինությունները բացահայտվեցին

Ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր կոռուպցիայի եւ տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների հակազդման վարչությունում տեղեկություններ էին ստացվել, որ 2014 թ. Սյունիքի մարզի Կարճեւան համայնքում ազատ տնտեսական գոտի ստեղծելու գործընթացի ժամանակ համայնքի ղեկավարի եւ այլ պաշտոնատար անձանց կողմից թույլ են տրվել չարաշահումներ:

Նյութերի նախապատրաստման ընթացքում պարզվել է, որ 2014 թ. հուլիսին գույքի կադաստրի կոմիտեի նախկին նախագահը, իր տեղակալի, ԱԳԿԿ Սյունիքի մարզային ստորաբաժանման եւ ԱԳԿԿ Մեղրիի սպասարկման գրասենյակի ղեկավարների հետ այցելել է Կարճեւան, որտեղ համայնքի ղեկավարին մատնացույց անելով «Մեղրի ազատ տնտեսական գոտի» ՓԲԸ-ի հարակից տարածքները, հայտնել է, որ վարչապետի նախաձեռնությամբ կազմված նախագծի հիման վրա, նշված տարածքում կազմակերպվելու է ազատ տնտեսական գոտի:

Պաշտոնական լիազորությունների շրջանակից դուրս, իր եւ վարչապետի անունից համայնքի ղեկավարին հանձնարարել է, որ նա կազմակերպի նշված տարածքները «ԷՍԻԷՅ» ՓԲԸ-ին օտարելու գործընթացը: Այնուհետեւ համայնքի ղեկավարին այցելած նույն ՓԲԸ-ի ներկայացուցիչը պայմանավորվածություն է ձեռք բերել նշված հողատարածքներն աճուրդով գնելու վերաբերյալ, միաժամանակ նշելով, որ աճուրդի օրը կապահովի նաեւ աճուրդին այլ անձի ձեւական մասնակցությունը:

Դրանից հետո համայնքի ղեկավարը կազմակերպել է հիշյալ հողերը աճուրդային եղանակով օտարելու ապօրինի գործընթաց, որի շրջանակներում բարձրաստիճան պաշտոնատար անձանց հանձնարարությունը ամեն գնով կատարելու եւ նրանց հաճոյանալու անձնական շահագրգռվածությունից ելնելով եւ պաշտոնական փաստաթղթերում ակնհայտ կեղծ տեղեկություններ մտցնելով՝ ավագանու անդամներից մեկի կեղծ ստորագրությամբ կազմել է իբր ավագանու նիստ անցկացնելու եւ որոշում կայացնելու վերաբերյալ կեղծ փաստաթղթեր եւ փաստացի չկայացած ավագանու նիստի եւ աճուրդի վերաբերյալ կեղծ փաստաթղթերի հիման վրա «ԷՍԻԷՅ» ՓԲԸ-ի հետ կնքված առուվաճառքի պայմանագրով 1 միլիոն 540 հազար, 550 հազար եւ 385 հազար դրամով օտարել է 32.00948 հեկտար գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասերը՝ էական վնաս պատճառելով Կարճեւան համայնքին:

Բացի այդ, համայնքի ղեկավարը արդեն իսկ տեղեկացված լինելով նշված տարածքում ազատ տնտեսական գոտի ստեղծելու հեռանկարի մասին, անձնական շահագրգռվածությունից ելնելով, հուլիսին ձեւական աճուրդ կազմակերպելու եղանակով, 2 միլիոն դրամով իր աներորդուն օտարել է «Մեղրի ազատ տնտեսական գոտի» ՓԲԸ-ի հարեւանությամբ գտնվող 1,378 հեկտար գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասերը:

Հարուցվել է քրեական գործ:

Նարեկ ՍԱՐԳՍՅԱՆ

Ապօրինություններ ԵՊՀ-ում

Սկիզբը՝ էջ 1

Պարզվել է, որ համալսարանի 18 աշխատակից 2015-2018 թթ. տարբեր ամիսների փաստացի չեն հաճախել աշխատանքի՝ երկար ժամանակով բացակայել են Հայաստանից: Պաշտոնատար անձինք, խմբային շահերից ելնելով, աշխատակիցների բացակայությունները ոչ միայն չեն արձանագրել, այլեւ պաշտոնական փաստաթղթերում կեղծ տեղեկություններ են արձանագրել, ինչի հետեւանքով փաստացի աշխատանքի չհաճախած անձանց անվամբ որպես աշխատավարձ դուրս գրված շուրջ 18 միլիոն դրամը հափշտակվել է:

Պարզվել է նաեւ, որ համալսարանի տարածքում վարձակալական հիմունքներով տնտեսվարող սուբյեկտներից մեկի՝ 2008-2012 թթ. տված վարձավճարները մասնակի են մուտքագրվել համալսարանի հաշվեհամարին: Այս ապօրինության հետեւանքով էլ յուրացվել է 9

միլիոն 200 հազար դրամ:

Նյութերի նախապատրաստման ընթացքում ոստիկանության կոռուպցիայի եւ տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների հակազդման վարչության ծառայողները, օպերատիվ տվյալներն իրացնելով, կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչություն են հրավիրել Երեւանի պետական համալսարանի հետ համագործակցած ընկերություններից մեկի փաստացի ղեկավարին: Նրա հաղորդման համաձայն՝ համալսարանի ղեկավար պաշտոնատար անձի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել շինարարական աշխատանքների կատարման պայմանագիր կնքելու վերաբերյալ: Մասնավորապես, բուհի ղեկավար պաշտոնատար անձն ընկերության ղեկավարից, որպես կաշառք, ստացել է 10 հազար դոլար արժողությամբ գույք: Այլ կերպ ասած՝ ընկերության ղեկավարը մասնակի նորոգել է նրա բնակարանը եւ առանձնատունը, ջեռուցման համակարգ է տեղադրել: Այս ամենի դիմաց բուհի ղեկավար պաշտոնատար անձը՝ 2015 թվականին ընկերության հետ շուրջ 400 միլիոն դրամի շինարարական աշխատանքների կատարման պայմանագիր է կնքել:

Դեպքերի առթիվ ոստիկանությունում քրեական գործ է հարուցվել խոշոր չափերի յուրացման կամ վատնման, պաշտոնեական կեղծիք կատարելու, պաշտոնատար անձի կողմից առանձնապես խոշոր չափի կաշառք ստանալու եւ կաշառք տալու հատկանիշներով:

Քրեական գործը ուղարկվել է քննչական կոմիտե:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

Կողոպտել էր մորաքրոջը

Փետրվարի 16-ի երեկոյան Սառնաղբյուր գյուղի մի տնից գողություն էր կատարվել: Հարմարեցված գործիքով բացել էին պատուհանը եւ դաշնամուրի միջից գողացել ոսկյա եւ արծաթյա զարդեր: Վնասի չափը մոտ 2 միլիոն դրամի էր:

Ահազանգը ոստիկանության Անիի բաժնում ստացվեց փետրվարի 17-ի գիշերը: Տանտերերը տուն վերադառնալով՝ տեսել էին, որ ոսկեղենը չկա, 1-02 էին զանգել:

Ասես հանցագործը լավ գիտեր ընտանիքի նիստուկացը: Տեղյակ էր եղել ոչ միայն, որ տանը ոսկեղեն կա, այլեւ՝ որտեղ են պահում: Չէր բացառվում, որ տուն ելումուտ անող, մտերիմ մեկը լիներ:

Ձեռնարկված համալիր որոնողական աշխատանքների արդյունքում ոստիկանները տեղեկություններ ստացան, որ գողությունը հնարավոր է կատարած լինի տանտիրուհու քրոջ դուստրը՝ Արտենի գյուղի բնակիչ Անուշ Դարբինյանը: Նա հրավիրվեց ոստիկանության Անիի բաժին: Հետագա միջոցառումներով պարզվեց, որ Անուշ Դարբինյանը փետրվարի 6-ին մորաքրոջ տնից ոսկյա չորս զարդ էր գողացել եւ փվել ընկերոջը՝ Արտենի գյուղի բնակիչ Սամսոն Քոչարյանին, իսկ փետրվարի 16-ին, արդեն նրա պահանջով, հայտնել էր մորաքրոջ տան տեղը, նաեւ՝ թե զարդերը որտեղ են պահում: Ընկերն էլ գործը գլուխ էր բերել:

Սամվել Քոչարյանը բերման ենթարկվեց ոստիկանության Անիի բաժին:

Իրավապահները պարզել են գողությանն օժանդակած երրորդ անձի ինքնությունը, որի փվյալները, նախաքննության շահերից ելնելով, չենք հրապարակում:

Հարուցվել է քրեական գործ:

Գոռ ՎԱՆՅԱՆ

Օպերատիվ

Հակակոռուպցիոն պայքարը շարունակվում է

Սկիզբը՝ էջ 1

Դաշորդ բացահայտումները Գեղարքունիքի մարզում էին: Ոստիկանության մարզային վարչության եւ Ձամբարակի բաժնի ծառայողների ձեռնարկած միջոցառմամբ պարզվեց, որ Գեղարքունիքի մարզի Ջիլ համայնքի նախկին ղեկավարը, օգտագործելով պաշտոնեական դիրքը, 2015-2017 թթ. համայնքապետարանի պահակ է ձեւակերպել որդուն, որը փաստացի աշխատանքի չի հաճախել: Նրա անվամբ դուրս գրված շուրջ մեկ միլիոն 200 հազար դրամ աշխատավարձը համայնքապետը յուրացրել է: Նույն եղանակով նախկին համայնքապետը յուրացրել է նաեւ 2013-2017 թթ. որպես հավաքարար ձեւակերպված մի կնոջ անվամբ դուրս գրված շուրջ 3 միլիոն դրամ աշխատավարձը:

Պարզվեց նաեւ, որ նախկին պաշտոնյան 2015 թվականի ընթացքում համայնքապետարանի ֆինանսական միջոցներից իր մերձավորների անվամբ օգնության գումարներ է դուրս գրել եւ յուրացրել:

Ոստիկանության Վարդենիսի բաժնի ծառայողների հետ համագործակցության արդյունքում էլ խարդախության դեպք բացահայտվեց:

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումներով պարզվեց, որ Գեղարքունիքի մարզում գործունեություն ծավալող «Ջորեղ ապագա» հասարակական կազմակերպության նախագահը, բարեգործության պատրվակով, տարբեր անձանց վստահությունը չարաշահել ու խաբեությամբ հափշտակել է շուրջ 28 միլիոն դրամ եւ 1,5 միլիոն դրամի շինարարական ապրանք ու վառելիք:

Կոռուպցիոն բնույթի հանցագործությունների բացահայտման ուղղությամբ միջգերատեսչական համագործակցությունը նույնպես շարունակվում է: Մասնավորապես՝ ոստիկանության եւ ԱԱԾ-ի համատեղ միջոցառմամբ օրերս բացահայտվեց առանձնապես խոշոր չափի գումար յուրացնելու դեպք:

Հանցագործության վերաբերյալ ազգային անվտանգության ծառայությունում ստացված օպերատիվ տեղեկությունների հիման վրա, ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության կոռուպցիայի եւ տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների հակազդման վարչության եւ Աշտարակի բաժնի աշխատակիցները օպերատիվ-հետախուզական միջոցառումներ ձեռնարկեցին: Պարզվեց, որ Արագածոտնի մարզի Ուշի համայնքի մի շարք պաշտոնատար անձինք, օգտագործելով պաշտոնեական դիրքը, 2017-2019 թթ. ընթացքում յուրացրել են 3 միլիոն 200 հազար դրամից ավելի գումար:

Պարզվել է, որ պաշտոնյաները յուրացրել են 2017 թվականի սեպտեմբերից մինչ օրս համայնքապետարանում որպես հավաքարար հրամանագրված անձի անվամբ դուրս գրված 1 միլիոն 430 հազար դրամը, իսկ նույն տարվա նոյեմբերին, Ուշիի բարեկարգման համար շինանյութ գնելու պատրվակով, համայնքի բյուջեից դուրս գրված 820 հազար դրամը:

Պարզվել է նաեւ, որ համայնքի սոցիալապես անապահով բնակիչներին դրամական օգնություն տրամադրելու պատրվակով 2017-2018 թթ. կեղծվել է համայնքի 17 քաղաքացու դիմում ու ստորագրություն եւ յուրացվել շուրջ 950 հազար դրամ:

Արձանագրված բոլոր դեպքերով հարուցվել են քրեական գործեր:

Էրիկ ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ

Դժվար կանխարգելում

Մարմնավաճառությունը մերժելի երեւույթ է, որի դեմ պայքարն իր առանձնահատուկ դժվարություններն ունի:

Երեւույթը հասարակական հնչողություն ունի՝ պայմանավորված մի շարք հանգամանքներով, որոնցից առաջինը ու, թերեւս, կարեւորը, սեռական հիվանդությունների վարակի աղբյուր լինելն է: Մարմնավաճառության դեմ պայքարը, կանխարգելիչ միջոցառումները ոստիկանության կողմից պարբերական բնույթ են կրում: Երեւույթի նախականխման ծրագրի շրջանակներում գործում է ոստիկանության տարբեր ծառայությունների գործողությունների համատեղ ծրագիր, ըստ որի՝ մարմնավաճառների հնարավոր հավաքատեղիներում պարբերաբար անցկացվում են ստուգայցեր, որոնց արդյունքում հայտնաբերված մարմնավաճառները ստուգման են ուղարկվում առողջապահության նախարարության մաշկավեներական կենտրոն:

Հերթական ստուգայցերը փետրվարի սկզբներին էին: Ոստիկանության Երեւան քաղաքի վարչության ենթակա բաժինների եւ պարեկապահակետային ծառայության գնդի ծառայողների իրականացրած միջոցառման ընթացքում հայտնաբերվեցին եւ մաշկավեներական կենտրոն ուղարկվեցին պոռնկությամբ զբաղվելու մեջ կասկածվող տասնյակ կանայք:

Մարմնավաճառությամբ զբաղվող կանայք իրենց արդարացնելու հազարումի փաստարկներ ունեն, օրինակ, աշխատանք չունենալն ու նյութական ծանր վիճակում գտնվելը: Իսկ «զորավոր» արդարացումը, որ նաեւ նրանց հիմնական զենքն է, հետեւյալն է՝ իմ մարմինն է, ու նրա հետ ինչպես վարվելը՝ իմ գործը: Մինչդեռ մարմնավաճառության երեւույթն ընդհանրապես, եւ իրենք՝ մարմնավաճառները՝ մասնավորապես, հակահասարակական երեւույթ են ոչ միայն որպես վեներական հիվանդությունների, այլեւ անբարոյականության տարածման տեսանկյունից: Բացի այդ, մարմնավաճառները իրենց հավաքատեղիներում խախտում են հասարակական կարգը, անհարմարություններ են պատճառում հարակից շենքերի բնակիչներին՝ իրենց պահվածքով, փողոցային վեճերով:

Մարմնավաճառության դեմ պայքարի ձեւերից մեկն էլ հանրապետության տարածքում գործող այն օբյեկտների ուսումնասիրություններն են, որոնք կարող են խթան հանդիսանալ մարմնավաճառության համար: Այդ կասկածելի վայրերում անցկացվում են ստուգայցեր: Փաստենք, որ այդ կարգի մի շարք օբյեկտների գործունեությունը կասեցվել է:

Հայտնաբերված եւ մաշկավեներական կենտրոն ստուգման ուղարկված կանայք վաղը վերստին շարունակելու են իրենց «մասնագիտական» զբաղմունքը. ասացինք՝ սա դժվար վերահսկելի երեւույթ է: Այնուամենայնիվ, ոստիկանության կողմից կանխարգելիչ միջոցառումներն ու պայքարը մշտական բնույթ են կրում. թեկուզ փոքր թվով մոլորվածների դարձը, մեկ-երկու ախտածին օբյեկտի հայտնաբերումն արդեն իսկ ձեռքբերում է...

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

Անառակաքարոն

Նախորդ տարվա սեպտեմբերի 14-ի գիշերը ոստիկանության Շենգավիթի բաժնում մի քաղաքացի հաղորդում էր տվել, որ անհայտ անձը հետապնդել է 9-ամյա դստերն ու իրենց շենքի շքամուտքում փորձել անառակաբարո գործողություններ կատարել:

Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնում քրեական գործ հարուցվեց: Տուժողն անչափահաս էր, ուստի սեռական անձեռնմխելիության եւ սեռական ազատության դեմ ուղղված հանցագործության բացահայտմանը միացան ոստիկանության Երեւան քաղաքի վարչության անչափահասների գործերով եւ ընտանիքում բռնության կանխարգելման վարչության քրեական հետախույզները: Նրանք Շենգավիթի բաժնի գործընկերների հետ ձեռնարկեցին տարաբնույթ միջոցառումներ: Տարածքի տեսախցիկների տեսագրությունների ուսումնասիրմամբ կասկածյալը ֆիքսվեց: Ոստիկանության հասարակայնության հետ կապի եւ լրատվության վարչությունը տեսանյութ հրապարակեց՝ նրա ինքնության եւ գտնվելու վայրի մասին տեղեկություն ունեցողներին հորդորելով տեղեկությունը հայտնել ոստիկանություն: Տեղեկություն չստացվեց. ոստիկանության ծառայողներն օպերատիվ աշխատանքով պարզեցին նրա ինքնությունն ու բնակության վայրը:

Պարզվեց, որ անչափահաս աղջկա նկատմամբ անառակաբարո գործողություններ կատարելու մեջ կասկածվող Արման Վարդանյանը դեպքից մի քանի օր անց մեկնել էր Ռուսաստան: Ոստիկանները նրա տեղաշարժը պահում էին տեսադաշտում: Արդյունքում՝ տեղեկացան, որ նա օրեր առաջ վերադարձել է:

Ոստիկանները նրան հայտնաբերեցին ու ներկայացրին ոստիկանության Շենգավիթի բաժին, որտեղ նա խոստովանական ցուցմունք տվեց:

Արմեն Վարդանյանը կալանավորվել է:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

Միջոցառում՝ նվիրված Թումանյանի 150-ամյակին

Փետրվարի 19-ը՝ Հովհաննես Թումանյանի ծննդյան օրը, նաեւ Գիրք նվիրելու օրն է, եւ այդ գեղեցիկ ավանդույթից անմասն չմնացին նաեւ ոստիկանության վետերանները:

Ոստիկանության Երեւան քաղաքի վետերանների խորհուրդը մի շարք դպրոցներում եւ գրադարաններում կազմակերպել էր գրքերի նվիրատվություն:

Գիրք նվիրելու եւ Հովհաննես Թումանյանի 150-ամյակին նվիրված հետաքրքիր միջոցառում էին նախաձեռնել Արաբկիր վարչական շրջանի վետերան ոստիկանները:

Ավետիք Իսահակյանի գրադարանի տնօրինության հետ համատեղ անցկացվեց գրականերաժշտական ցերեկույթ, որին մասնակցում էին գրողներ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, ուսուցիչներ, դպրոցականներ, պարզապես ընթերցասերներ:

Ոստիկանության Երեւան քաղաքի վետերանների խորհրդի նախագահ Գեղամ Օհանյանն իր խոսքում կարեւորեց նման միջոցառումների կազմակերպումը, նաեւ վստահեցրեց, որ ոստիկանության եւ հասարակություն կապը նաեւ այդ միջոցառումներով է ամրապնդվում:

Ոստիկանության վետերանները գրքեր նվիրեցին գրադարանին, իսկ դպրոցականներն իրենց գեղեցիկ ելույթներով ամփոփեցին միջոցառումը:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Ոստիկանության Արաբկիրի վետերանների խորհրդի նախագահ

Կալանավորը հայտնաբերվեց

Փետրվարի 18-ին, ժամը 15.50-ի սահմաններում, ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն ահազանգ հնչեց: Հայտնում էին, որ «Արմենիա» բժշկական կենտրոնից դատապարտյալ է փախել: Խոսքը 8 տարի 6 ամիս ժամկետով ազատազրկված, «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում պատիժը կրող Հայկ Գալստյանի մասին էր, որը բուժման նպատակով տեղափոխվել էր հիվանդանոց:

Հիվանդանոցից փախուստի դիմած դատապարտյալին հայտնաբերելու նպատակով ոստիկանության Երեւան քաղաքի վարչության, Մաշտոցի եւ Արաբկիրի բաժնի քրեական հետախույզները եւ պարեկապահակետային ծառայության գնդի ոստիկանները, համագործակցելով քրեակատարողական հիմնարկի ծառայողների հետ, ձեռնարկեցին տարաբնույթ միջոցառումներ:

Փետրվարի լույս 19-ի գիշերը ոստիկանները Հայկ Գալստյանին հայտնաբերեցին Կոտայքի մարզի Բալահովիտ գյուղի հյուրանոցային համալիրի բակում:

Նա տեղափոխվել է ազատազրկման վայր:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Բնություն ջնջողները

Ոմանք բնությունը դիտում են որպես նյութական միջոց: Մառեր են հատում, Կարմիր գրքում գրանցված կենդանիներ որսում՝ չմտածելով, որ իրենց արարքով ոչ միայն վնասում են բնությունը, այլեւ հատում են քրեական օրենսգրքի սահմանները: Գուցեեւ լավ էլ մտածում ու գիտակցում են արարքի ծանրությունը, դրա համար էլ իրենց սեւ գործը փորձում են գաղտագողի անել:

Ամիսներ առաջ Տավուշի մարզի Հաղարծին գյուղի բնակիչ Մարգար Գեւորգյանը որոշեց հատուկ պահպանվող տարածքից ծառեր հատել: Վառելափայտ էր պետք. հատեց կաղնի եւ բոխի: Բայց տեղափոխել չհասցրեց. բռնվեց:

Ոստիկանության Դիլիջանի բաժնում նյութեր նախապատրաստվեցին: Պատճառված վնասը 547 հազար դրամի էր:

Կատարվում է քննություն:

Տարեվերջին Գանձաքար գյուղի բնակիչ Հովհաննես Մնացականյանը որոշեց գնալ որսի: Հովք գյուղի հարակից անտառ մտավ ապօրինի երկփողանի որսորդական հրացանով զինված: Ժամերով որս փնտրեց: Ի վերջո, վայրի այծյամ նկատելուն պես դարանակալեց եւ կրակեց: Գիտեր, որ այծյամի որսն արգելված է, բայց...

Որսով հանդերձ պատրաստվում էր տուն վերադառնալ, բայց հանգրվանեց ոստիկանության Դիլիջանի բաժնում: Պատճառված վնասը 250 հազար դրամի էր:

Այս դեպքով եւս կատարվում է քննություն:

Թեղուտ գյուղի բնակիչ Մանվել Սարիբեկյանը որոշեց անտառ գնալ ու քամուց տապալված ծառեր հավաքել: Տրակտոր վարձեց ու ընկերոջ՝ Մինասի հետ անտառ ուղեւորվեց: Եվ քանի որ տրակտորով առաջ գնալ չէին կարողանում, որոշեցին իրենց համար ճանապարհ հարթել. 260 մետր երկարության եւ երեք մետր լայնության անտառամիջյան ճանապարհ բացեց՝ դեգրադացիայի ենթարկելով հողի վերին շերտը, ինչի հետեւանքով բնությանը պատճառեց 149 հազար դրամի վնաս:

Կատարվում է քննություն:

Տունը կռիվ էր ընկել

Գեղարքունիքի մարզի Կարճաղբյուր գյուղի փներից մեկում կռիվ էր ընկել: Առավոտյան Վարդանը կնոջը՝ Գայանեին, առաջարկեց այցելել մոր շիրիմին: Գայանեն դեմ չէր եւ առաջարկեց այցելել նաեւ իր հոր շիրիմին:

Վարդանը Կարճաղբյուրից Վարդենիս հասնելու մտադրություն չունենալով՝ առարկեց: Գայանեն էլ նեղացավ ու հրաժարվեց նրա հետ գնալ գերեզմանատուն:

Վիճեցին. Գայանեն զիջելու մտադրություն չուներ, իսկ Վարդանի զայրույթը գնալով աճում էր. խփեց կնոջը: Վեճին ներկա էին երեխաները: Արդյունքում՝ գերեզմանատուն չգնացին եւ 2019 թվականը դիմավորեցին իրարից նեղացած:

Հաջորդ օրը, ընդհանուր հայտարարի գալով, այնուամենայնիվ, գնացին իրենց ծնողների շիրիմներին: Տուն վերադառնալուն պես կրքերը նորից թեժացան, ու Վարդանը կրկին ծեծեց կնոջը:

Կատարվածի մասին տեղեկացան ոստիկանության Վարդենիսի բաժնի աշխատակիցները: Նյութեր նախապատրաստվեցին:

Դիմողի բողոքի բացակայությամբ, սակայն, քրեական գործի հարուցումը մերժվել է:

Կարինե ՄՈՒՐԱԴՅԱՆ

Կյանքից հետո

Ալբերտ Էյնշտեյնից հետո ֆիզիկոսները սկսեցին դիտարկել իրականության տարբեր մակարդակներ ու եկան եզրակացության, որ մարդը կապող օղակ է նյութական եւ ինֆորմացիոն աշխարհների միջեւ: Մասնավորապես, շրջանառության մեջ դրվեց «Կյանք կյանքից հետո» արտահայտությունը, որը առանցքային նշանակություն ունի տարբեր կրոններում. մահվանից հետո ինֆորմացիոն կառույցը բաժանվում է ֆիզիկական մարմնից եւ ապրում ինքնուրույն կյանքով: Ենթադրվում է, որ հոգին գտնվում է սրտում:

Ռուս պրոֆեսոր Կոնստանտին Կորոտկովին վաղուց էր հետաքրքրում այդ խնդիրը եւ հատկապես, այսպես կոչված՝ «Կիրլիանի էֆեկտը», որի էությունը հետեւյալն է. էլեկտրամագնիսական դաշտում զետեղված ցանկացած օբյեկտ սկսում է կապտավուն լույս արձակել, ընդ որում, անշունչ մարմինների լուսարձակումը կտրուկ տարբերվում է կենդանի մարմինների լուսարձակումից: Օրինակ, մեխն ու քարը միանման լույս են արձակում, իսկ ծաղիկն ու, ասենք, մարդու ձեռքը ունեն իրենց անկրկնելի բիոդաշտը:

Կենդանի մարմինների բազմաթիվ փորձարկումներից հետո պրոֆեսոր Կորոտկովը որոշեց կյանքի կոչել մի տարօրինակ գաղափար, որի իմաստը հետեւյալն էր՝ պարզել, թե ինչպես է դրսեւորվում «Կիրլիանի էֆեկտը» մարդկային դիակների պարագայում: Արդյունքն ապշեցրեց գիտնականներին. մեռյալների էներգիան աստիճանաբար չէր մարում, ինչպես նախապես ենթադրվում էր: Գրաֆիկների վրա մարման կորը, մահվանը հաջորդած երկու-երեք օրերին մերթ կտրուկ «ցատկում էր» վեր, մերթ կրկին ընկնում՝ ասես մեռած մարմնում ինչ-որ առեղծվածային ուժ լիներ:

Հետազոտողներին հաջողվեց արձանագրել մարմնից ինֆորմացիոն թաղանթի, այլ կերպ ասած՝ հոգու հեռանալը:

Կասկածամիտներն ու մատերիալիստները այդ էներգետիկ տատանումները վերագրում էին քայքայվող մարմինների մեջ ընթացող տրոհման գործընթացներին, սակայն չէին կարողանում բացատրել, թե ինքնասպանների էներգետիկ կորը ինչու է «ցատկոտում» խելագարի պես, իսկ բնական մահով վախճանվածների խաղաղ էներգետիկ պատկերը, որպես կանոն, պահպանվում էր:

Այդ պահից ի վեր «Կիրլիանի էֆեկտի» հիման վրա Կոնստանտին Կորոտկովի գիտական խումբը ժամանակակից համակարգչային սարքավորումներ ու տեխնոլոգիաներ ստեղծեց, որոնք թույլ էին տալիս մանրակրկիտ ախտորոշել մարդու վիճակը:

Գիտնականի վկայությամբ՝ մարդու էներգետիկ դաշտը չափող սարքն աշխատում է հետեւյալ կերպ: Նախ անհրաժեշտ ինֆորմացիա է հավաքվում մարդու ֆիզիկական դաշտերի վերաբերյալ, որոնք տեղաբաշխված են մատների շուրջը: Երբ մատին էլեկտրամագնիսական ազդակ է տրվում, դրա ազդեցությամբ մարմինը ֆոտոնների եւ էլեկտրոնների հոսք է արձակում, որն արձանագրվում է օպտիկական սարքերով ու վերլուծվում համակարգչով: Այսպիսով, տաս-տասնհինգ րոպեում ստացվում է մարդու մասին ամբողջ ինֆորմացիան՝ հոգեբանությունը, մարմինը, օրգանների վիճակը եւ այլն:

Մասնագետների համոզմամբ՝ պրոֆեսոր Կոնստանտին Կորոտկովին հաջողվել է կենսաէլեկտրագրության ոչ անհայտ մեթոդն ընդլայնել ու հասցնել այնպիսի մակարդակի, երբ տեխնոլոգիան հնարավոր է կիրառել պրակտիկայում: Իսկ սարքի կիրառման ոլորտները երեքն են՝ մարդու առողջական վիճակի դիտարկում, կիրարկում մասնագիտական ընտրության ժամանակ եւ երբ անհրաժեշտ է շտապ ու ճշգրիտ տեղեկություններ ստանալ կոնկրետ անձի հոգեբանական առանձնահատկությունների մասին:

Պատրաստեց Տաթեւ ՄԵԺՈՒՆՑԸ

Զվարճալի ամփոփագիր

Օգնության ձեռքի կծած մատը

Հիվանդանոցից հաղորդում է ստացվել, որ ձեռքի մատի եղունգային ֆալանգի ծայրահատված վերքով բուժօգնության է դիմել 45-ամյա մի կին:

Կինը պատմել է, որ գիշերվա մեկի սահմաններում տեղի է ունեցել ճանապարհատրանսպորտային պատահար, ինքը որդու եւ դստեր հետ փորձել է օգնություն ցույց տալ վթարի ենթարկված երիտասարդներին, սակայն նրանք ծեծել են իրենց, նաեւ կծել են կնոջ մատն ու դիմել փախուստի:

Եզդին ու «գնչուն»

60-ամյա մի տղամարդ հայտնել է, որ անցած տարվա մայիսին իր ձին գողացել են, ինքը նախկինում ոստիկանություն չի դիմել, բայց այսօր ձիուն տեսել է հարեւան գյուղի մի ցանկապատված հողամասում, խնդրում է ոստիկանության օգնությունը՝ ձիուն վերադարձնելու համար:

Ցանկապատված հողամասի 40-ամյա «գնչու» տերը ներկայացել է բաժին եւ հայերեն խոստովանել արարքը:

Խմած որդու սթափ հորաքույրը

56-ամյա մի կին հաղորդում է տվել, որ եղբոր 34-ամյա որդին ոգելից խմիչք օգտագործած վիճակում կոտրել է եղբոր տան պատուհանի ապակիներն ու հեռուստացույցը:

Ձեռնարկվում են միջոցառումներ եղբորորդուն հայտնաբերելու ուղղությամբ:

Շատ հին վեճ՝ պլաստիկ վերջաբանով

84-ամյա Ժորան հաղորդում է տվել, որ կենցաղային հարցերի շուրջ ծագած վիճաբանության ժամանակ 81-ամյա կինը շշով մի քանի անգամ խփել է գլխին, եւ ինքը ստացել է մարմնական վնասվածք:

Ոստիկանները ճշտել են, որ կինը, բարեբախտաբար, «զինված» է եղել պլաստիկ շշով:

Գյուղական կարգով

Ոստիկանություն զանգած քաղաքացին հայտնում էր, թե գյուղում մարդ են սպանել:

Մեկնած ոստիկանները, սակայն, դիակ չեն հայտնաբերել: Պարզվել է՝ վիճել են երկու հարեւան. վեճին ու ծեծկռտուքին մասնակցել են նաեւ նրանց կանայք ու բարեկամները:

Սակայն երկու կողմն էլ հրաժարվել է կտրոն-ծանուցագիր ստանալուց:

Գող պահակը

Մի ընկերության անվտանգության պետը հաղորդում է տվել, որ գիշերը ընկերության տարածքում մետաղյա տարայից գողացել են մոտ մեկ տոննա դիզելային վառելիք:

Պարզվել է, որ գողությունը կատարել է անվտանգության ծառայության պահնորդը, այլ կերպ ասած՝ պահակը: Նա հրավիրվել է բաժին եւ տվել խոստովանական բացատրություն:

www.police.am

Ըստ ոստիկանության օպերատիվ հաղորդագրությունների ամփոփագրերի՝ փետրվարի 14-ից 21-ը ընկած ժամանակահատվածում ձեռնարկված օպերատիվ-փնտրողական եւ բացատրական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել կամ կամավոր ներկայացել է 34 հետախուզվող:

Հայտնաբերվածներից 1-ը հետախուզվում էր դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու, 1-ը՝ ծեծի, 1-ը՝ բռնաբարության, 2-ը՝ գողության, 1-ը՝ գողության փորձին հանցակցելու, 1-ը՝ խարդախության եւ յուրացնելու կամ վատնելու, 1-ը՝ յուրացնելու կամ վատնելու, 1-ը՝ ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելու, իրացնելու, պահելու, փոխադրելու կամ կրելու, 2-ը՝ խուլիգանության, 1-ը՝ իրացնելու կամ պատրաստելու նպատակով թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի եւ դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության կամ դրանք ապօրինի իրացնելու եւ առանց իրացնելու նպատակի թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառության, 1-ը՝ առանց իրացնելու նպատակի թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառության, 1-ը՝ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր, տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշեր կեղծելու, իրացնելու կամ օգտագործելու, 1-ը՝ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր, տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշեր կեղծելու, իրացնելու կամ օգտագործելու եւ պետական սահմանն ապօրինի հատելու,1-ը՝ պետական սահմանն ապօրինի հատելու, 1-ը՝ անօրինական միգրացիայի կազմակերպմանը հանցակցելու, 3-ը՝ սուտ մատնության համար:

Հայտնաբերվել է այլ երկրների կողմից 5 հետախուզվող:

Արձանագրվել է 71 ճանապարհատրանսպորտային պատահար. 7 մարդ զոհվել է, 90-ը՝ ստացել մարմնական վնասվածքներ:

Արձանագրվել է վրաերթի 18 դեպք. 3 մարդ զոհվել է, իսկ 16-ը ստացել են մարմնական վնասվածքներ:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Հանրապետության ճանապարհներին

Փետրվարի 18-ին «Ռենո» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Երեւանի Թբիլիսյան խճուղում վրաերթի է ենթարկել 16 եւ 18-ամյա քաղաքացիների, որոնք մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Փետրվարի 18-ին «Մոսկվիչ-21412» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Սեւան քաղաքի Նաիրյան փողոցում վրաերթի է ենթարկել 56-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Փետրվարի 18-ին Երեւանյան փողոցում իրար են բախվել «Օպել Զաֆիրա» եւ «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենաներ. «Օպել Զաֆիրա»-ի 25-ամյա ուղեւորուհին մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Փետրվարի 18-ին «ՎԱԶ-2108» մակնիշի ավտոմեքենան բախվել է շրջադարձ կատարող «Միցուբիշի Պաջեռո» մակնիշի ավտոմեքենայի. վարորդները եւ «Միցուբիշի Պաջեռո»-ի 19-ամյա ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Փետրվարի 18-ին «Մերսեդես Բենց C-220» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Արարատի մարզի Դարակերտ գյուղում վրաերթի է ենթարկել 80-ամյա մի կնոջ, որը տեղում մահացել է:

■

Փետրվարի 18-ին «ԲՄՎ-318» մակնիշի ավտոմեքենան Վանաձոր-Բագրատաշեն ճանապարհի 67-րդ կմ-ին դուրս է եկել երթեւեկելի գոտուց, բախվել ծառին եւ հայտնվել Դեբեդ գետի ափին. վարորդը տեղում մահացել է:

■

Փետրվարի 19-ին Երեւանի Սեբաստիայի եւ Լենինգրադյան փողոցների խաչմերուկում անհայտ ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 45-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Փետրվարի 19-ին Երեւանի Ռուբինյանց փողոցում իրար են բախվել «Օպել» եւ «Ֆոլքսվագեն» մակնիշի ավտոմեքենաներ. «Ֆոլքսվագեն»-ի երկու ուղեւորները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Փետրվարի 19-ին Աշտարակ քաղաքի Երեւանյան փողոցում իրար են բախվել «ՎԱԶ-2106» եւ «Հոնդա» մակնիշի ավտոմեքենաներ. «ՎԱԶ-2106»-ի 22-ամյա վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Փետրվարի 19-ին «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Գյումրու Վարդանանց հրապարակում վրաերթի է ենթարկել 79-ամյա քաղաքացու եւ իր մեքենայով տեղափոխել հիվանդանոց:

■

Փետրվարի 19-ին Երեւանի Սարալանջի փողոցում իրար են բախվել երկու «Մերսեդես» եւ «Օպել Վեկտրա» մակնիշի ավտոմեքենաներ. «Մերսեդես»-ներից մեկի 32-ամյա վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց, իսկ մյուսի 57-ամյա վարորդը հիվանդանոց տեղափոխվելու ճանապարհին մահացել է:

■

Փետրվարի 19-ին էջմիածին-Մարգարա ճանապահի 5-րդ կմ-ին իրար են բախվել «Օպել» եւ «ՎԱԶ-21144» մակնիշի ավտոմեքենաներ. վարորդները եւ «ՎԱԶ-21144»-ի 27-ամյա ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց, որտեղ «ՎԱԶ-21144»-ի 41-ամյա վարորդը մահացել է:

■

Փետրվարի 19-ին Կոտայքի մարզի Գեղադիր գյուղում իրար են բախվել «Օպել» եւ «ՎԱԶ-2107» մակնիշի ավտոմեքենաներ. «ՎԱԶ-2107»-ի 24-ամյա ուղեւորուհին մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Փետրվարի 20-ին Երեւանի Միկոյան փողոցում իրար են բախվել «Ռենո» եւ «ԲՄՎ» մակնիշի ավտոմեքենաներ. «ԲՄՎ»-ի 27-ամյա վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

Արդյունավետ կանխարգելում

Սկիզբը՝ նախորդ համարում

ԱՄՆ 300-միլիոնանոց բնակչության ձեռքին շուրջ 200 միլիոն հրազեն կա: Եվ դա տալիս է հակառակ արդյունքը, նպաստում է հրազենով կատարվող հանցագործությունների թվի աճին: Պատահական չէ, որ 20 եւ 21-րդ դարերի սահմանագծին Միացյալ Նահանգների ուսումնական հաստատություններում հրազենի կիրառմամբ բռնության զոհ է դարձել 450 մարդ:

ԱՄՆ Վիրջինիայի տեխնիկական համալսարանում 2007 թվականին տեղի ունեցած սպանդը ցնցեց ողջ աշխարհը. քսաներեքամյա հարավկորեացի Չո Սուն Հոյը, որն ապրում էր Միացյալ Նահանգներում, գնդակահարեց 32 ուսանողների, ապա ինքնասպան եղավ: Դա ամենաարյունոտ ողբերգությունն էր ԱՄՆ-ի պատմության մեջ:

2006 թ. սեպտեմբերի 2-ին 49-ամյա Դուգլաս Փենինգթոնը սպանեց իր 24 եւ 26 տարեկան որդիներին՝ Արեւմտյան Վիրջինիայի համալսարանում, ապա ինքնասպան եղավ:

2002 թ. հոկտեմբերի 28-ին Պարսից ծոցի առաջին պատերազմի վետերան եւ Արիզոնայի համալսարանի ուսանող, 40-ամյա Ռոբերտ Ֆլորսը, հինգ ատրճանակներով զինված, սպանեց երեք դասախոսների, ապա՝ իրեն:

2002 թ. հունվարի 16-ին Ապալաչիի իրավաբանական դպրոցից հեռացված 42-ամյա Փիթեր Դիքհիզուվը սպանեց դեկանին ու սովորողներից մեկին, վիրավորեց եւս երեք հոգու: Նրան բռնեցին ու զինաթափեցին ուսանողները:

2000 թ. օգոստոսի 28-ին Արկանզասի

համալսարանի 36-ամյա ուսանող Ջեյմս Իսթոն Քելլին ու 67-ամյա պրոֆեսոր Ջոն Լոբեն, փոխադարձ համաձայնությամբ, սպանեցին իրար:

1996 թ. օգոստոսի 15-ին Սան Դիեգոյի համալսարանի 36-ամյա ասպիրանտը ատենախոսության պաշտպանության ժամանակ գնդակահարեց երեք պրոֆեսորի:

1991 թ. նոյեմբերի 1-ին 28-ամյա Գան Լուն՝ Չինաստանից, որը ֆիզիկա էր ուսումնասիրում Այովայի համալսարանում, սպանեց ուսումնական հաստատության հինգ աշխատակցի, երկուսին վիրավորեց, ապա ինքնասպան եղավ: Մի վարկածի համաձայն՝ նրան այդ քայլին էր մղել այն հանգամանքը, որ իր դոկտորական դիսերտացիան պարգեւատրման չէր արժանացել:

1970 թ. մայիսի 4-ին չորս ուսանող սպանվեց եւ ինը վիրավորվեց, երբ ԱՄՆ ազգային գվարդիայի զինվորները ցրում էին Օհայոյի Քենթի համալսարանի հակապատերազմական ցույցը:

1966 թ. օգոստոսի 1-ին Չարլզ Ուիթմանը բարձրացավ Տեխասի համալսարանի դիտաշտարակը եւ կրակ բացեց՝ սպանելով 16 եւ վիրավորելով 31 մարդու...

Ողբերգություններին վերաբերող ամենաակնհայտ եզրակացությամբ՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների ուժային կառույցները, չնայած աշխատակիցների մեծ թվին ու տեխնիկական հագեցվածությանը, չկարողացան նախ կանխել, ապա եւ արդյունավետ գործել այնպիսի իրավիճակում, երբ մոլագարի պատանդ են դառնում հարյուրավոր մարդիկ: Մայրահեղ վիճակներում, արդեն ավանդաբար, հստակ չէին գործել ահազանգման համակարգերը, չէր իրականացվել հանցագործի հրատապ հայտնաբերում ու չեզոքացում: Դանրությունն այն համոզման էր, որ ամերիկացիները դեռ շատ բան ունեն սովորելու իրենց իսրայելցի եւ գերմանացի գործընկերներից՝ ահաբեկչական գործողության կանխարգելման ու չեզոքացման ոլորտում...

Սկիզբը՝ նախորդ համարում

Խաբեաներ

Առասպելական խաբեբա Ֆրենք Աբիգնեյլը տասնյոթ տարեկանում դարձավ ԱՄՆ պատմության մեջ բանկերի ամենահաջողակ կողոպտիչներից մեկը: Նա կարողացավ կեղծել 2,5 միլիոն դոլարի բանկային չեքեր:

Խաբեբայի հայրը խոշոր գործարար էր, որը դարձավ որդու առաջին զոհը: Թաքնվելով քրեական հետապնդումից՝ Աբիգնեյլը հանդես էր գալիս որպես օդաչու, հասարակագիտության պրոֆեսոր, բժիշկ, փաստաբան: Յուրաքանչյուր մասնագիտություն նրան նոր տեղեկատվություն էր բերում, ինչը վարպետորեն օգտագործում էր իր մեքենայություններում: Նրան ձերբակալեցին քսանմեկ տարեկանում՝ 1969 թ. եւ դատապարտեցին 12 տարվա ազատազրկման, սակայն կարճ ժամանակ անց ազատ արձակեցին. համաձայնել էր համագործակցել ԱՄՆ Դաշնային հետաքննությունների բյուրոյի հետ՝ բանկային խարդախություններ բացահայտելու գործում:

Արթուր Ֆերգյուսոնը երազում էր դերասան դառնալ, սակայն լոնդոնյան ոչ մի թատրոն չէր ընդունում նրան: Երիտասարդը որոշում է իր դերասանական ընդունակություններն օգտագործել մարդկանց խաբելու վրա: Մի օր Լոնդոնի Թրաֆալգարի հրապարակում զբոսնելիս նկատում է ամերիկացի զույգի, որը հիանում էր նշանավոր ծովակալ Նելսոնին նվիրված աշտարակով: Արթուրը մտերմիկ զրույց է սկսում, ապա ներկայանում որպես կառավարական պաշտոնյա եւ առաջարկում գնել հուշարձանը 6 հազար ֆունտ սթեռլինգով եւ տեղափոխել ԱՄՆ: Խաբեբան հուշարձանի վաճառքը «բացատրում է» այն հանգամանքով, որ բրիտանական կառավարությունը այդ կերպ ցանկանում է վճարել պետական պարտքը: Իբր նույն նպատակով վաճառվում են նաեւ այլ հուշարձաններ: Հարուստ ամերիկացին, ոչինչ չկասկածելով, վճարում է պահանջված գումարը:

Անսպասելի հաջողությունը ոգեւորում է երիտասարդին, եւ նա հաջորդ երկու շաբաթների ընթացքում ամերիկացի զբոսաշրջիկներին վաճառում է Բիգ Բենը, երկու անգամ Բուքինգհեմյան պալատը:

Ֆերգյուսոնը

որոշում է համանման «ներկայացումներ» բեմադրել ԱՄՆ-ում, որտեղ ամերիկյան ֆերմերին 100 հազար դոլարով երկարատեւ վարձակալման է հանձնում Սպիտակ տունը, վաճառում է Ազատության արձանը, սակայն գործում է ճակատագրական սխալ: Գնորդը՝ ավստրալացի մի հարուստ տատիկ, առաջարկում է միասին լուսանկարվել, եւ խաբեբան, գործարքը չտապալելու եւ կասկած չհարուցելու համար համաձայնում է: Տատիկը մի քանի ժամ մտորելուց հետո դիմում է ոստիկանություն:

Գերմանական Կյոպենինգում բնակվող կոշկակար Վիլհելմ Ֆոյգտը հասցրել էր չորս անգամ՝ գողության, երկու անգամ փաստաթղթեր կեղծելու համար բանտ նստել: Վերջին անգամ դատապարտվել էր 15 տարվա բանտարկության՝ դրամարկղից կողոպուտի համար:

Պատիժը կրելուց հետո Ֆոյգտը որոշում է գրավել քաղաքապետարանը. հնավաճառից գնում է գերմանական բանակի կապիտանի համազգեստ եւ դուրս գալով փողոց՝ կանգնեցնում զինվորների ջոկատը՝ հրամայելով ուղղվել դեպի քաղաքապետարան: Նա հրամայում է ոստիկաններին հսկել քաղաքապետարանի շրջակայքը եւ պահպանել կարգուկանոն: Զինվորների մի մասի հետ մտնելով քաղաքապետարան՝ ձերբակալում է քաղաքապետին ու գանձապահին, ապա դատարկում դրամարկղը:

Ձերբակալվում է տասը տարի անց եւ դատապարտվում 4 տարվա բանտարկության: Ստանալով խաբեբայության մասին քրեական գործը՝ կայսր Վիլհելմը ծիծաղում է՝ «Ահա թե ինչ է նշանակում կարգապահություն: Աշխարհի ոչ մի ժողովուրդ մեզ չի կարող հասնել»: Զեկուցագրի վրա մակագրում է՝ «Հանձարեղ տղա», եւ հրամայում է նրան ազատ արձակել:

Այս դեպքից հետո Ֆոյգտը դառնում է հանրաճանաչ, ոտքի տակ է տալիս ողջ Գերմանիան, հանդես է գալիս պանդոկներում եւ կրկեսներում, իր լուսանկարները վաճառում եւ գրում հուշեր:

1989 թ. Սերգեյ Մավրոդին Մոսկվայում հիմնում է «ՄՄՄ» ընկերությունը, որը Ռուսաստանի ողջ պատմության ընթացքում ամենախոշոր ֆինանսական բուրգն էր: Խաբեբայի գործունեության հետեւանքով տուժեց 10-ից 15 միլիոն քաղաքացի:

«ՄՄՄ»-ը Մավրոդին ղեկավարում էր բացառապես հեռախոսով, եւ բուրգը գոյատեւեց ընդամենը կես տարի: 1994 թ. օգոստոսի 4-ին Մավրոդին ձերբակալվում է հարկերից խուսափելու համար, սակայն կարողանում է հասնել նրան, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը նրան գրանցում է որպես պատգամավորության թեկնածու, իսկ հոկտեմբերին ազատ է արձակվում: 1996 թ. իր թեկնածությունն է առաջադրում որպես Ռուսաստանի նախագահ:

Պատգամավորությունից զրկվելուց հետո Մավրոդիի նկատմամբ կրկին քրեական գործ է հարուցվում, իսկ 1998 թ. նրա նկատմամբ միջազգային հետախուզում է հայտարարվում: 2003 թ. Մավրոդին ձերբակալվում է: Նրա դեմ հայց էր ներկայացրել ավելի քան 10 հազար ավանդատու: Քաղաքացիական հայցի գումարը մոտ 300 միլիոն ռուբլի էր:

Պատրաստեց **ՌՈՒԲԵՆ ՍԱՀԱԿՅԱՆԸ**

Համակարգչային հանցագործություններ

Տեղեկատվական բարձր տեխնոլոգիաները, որ գիտության ու տեխնիկայի զարգացածության վկայությունն են, միեւնույն ժամանակ, համաշխարհային պրակտիկա ներմուծեցին նոր հանցատեսակ՝ կիբերհանցագործություն: Դիմնախնդիրն առկա է նաեւ մեր երկրում: Չնայած բացահայտման դժվարություններին՝ մեր իրավապահները, մասնավորապես՝ ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության բարձր տեխնոլոգիաների ոլորտում կատարվող հանցագործությունների դեմ պայքարի բաժնի աշխատակիցները, արդյունավետ պայքար են մղում կիբերհանցագործությունների բացահայտման ուղղությամբ:

Բարձր տեխնոլոգիաների ոլորտում կատարվող հանցագործությունների դեմ պայքարի բաժնի կողմից 2018 թ. ընթացքում ներկայացվել է 98 օպերատիվ ամփոփագիր: Հայտնաբերված դեպքերով հարուցվել է 70 քրեական գործ, որոնցից 16-ը քրեական օրենսգրքի 181 հոդվածի մեղադրանքով՝ հափշտակություն համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ, 22-ը՝ քրեական օրենսգրքի 254 հոդվածի մեղադրանքով՝ համակարգչային տեղեկատվությանն ապօրինի տիրանալը, 5-ը՝ քրեական օրենսգրքի 263 հոդվածի մեղադրանքով՝ պոռնկագրական նյութեր կամ առարկաներ տարածելը, 4-ը՝ քրեական օրենսգրքի 178 հոդվածի՝ խարդախության մեղադրանքով, 3-ը՝ քրեական օրենսգրքի 137 հոդվածի՝ սպանության սպառնալիքի մեղադրանքով եւ այլն: Եվս ինը գործ հարուցվել է քրեական օրենսգրքի 182, 189, 294 եւ 322 հոդվածների մեղադրանքով: Ստացվել եւ համապատասխան ընթացք է տրվել քաղաքացիներից ստացված 123 դիմումներին: Ոլորտին առնչվող հարցումներով ցուցաբերվել է ավելի քան 441 մասնագիտական աջակցություն:

Ըստ վիճակագրության՝ 2018 թ. աճ է գրանցվել քրեական օրենսգրքի 181՝ հափշտակությունը, որը կատարվել է համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ, եւ 254՝ համակարգչային տեղեկատվությանն ապօրինի տիրանալը, հոդվածների մասով: Այս հանցատեսակները կատարվում են հիմնականում սոցիալական ցանցերի կամ էլեկտրոնային փոստերի օգնությամբ: Բացահայտումը կապված է հիմնականում հանցագործության՝ արտերկրում ավարտվելու եւ հետքերը մի քանի երկրների սերվերային համակարգերում թաքցնելու հետ: Գումարած՝ տարբեր երկրներում գործող եւ միմյանց հետ օրենսդրական հակասություններ առաջացնող իրավական ակտերը, ինչի արդյունքում պահանջված տվյալը հիմնականում չի հասնում պահանջող իրավապահ մարմնին:

Նշենք, որ մեզ «հասանելի» հանցատեսակ է համակարգչային տեղեկատվությանն ապօրինի տիրանալը, այն է՝ համապատասխան սարքավորումների միջոցով տեղեկատվություն որսալը, տարբեր կրիչներից տեղեկատվությունն ապօրինի պատճենահանելը՝ լինի բանկային քարտի մագնիսական ժապավենի, թե բջջային օպերատորի սիմ քարտի տեղեկատվություն:

Հաջորդ տարածված հանցատեսակը համակարգչային վնասաբեր ծրագրեր մշակելը, օգտագործելը եւ տարածելն է:

Վիրտուալ աշխարհում կատարվող հանցատեսակներից է նաեւ շորթումը: Սոցիալական ցանցերում երրորդ անձի անունով ստեղծվում են վարկաբեկիչ անկետաներ, որտեղ նշվում են այդ անձի անհատական տվյալները, հեռախոսահամարը եւ այլն, այնուհետեւ գումար են պահանջում դրանք վերացնելու համար:

Անդրադառնանք համակարգչային հանցագործությունների՝ վերջին շրջանում գրանցված մի քանի դեպքի:

Ներկայացվող համակարգչային հանցագործությունը կատարվել է նոյեմբերին, մինչդեռ Գեղարքունիքի մարզի բնակիչ տուժողը ոստիկանության Սեւանի բաժնում հաղորդում է տվել դեկտեմբերի 12-ին:

Տուժողն ուսանող է: Նա հայտնել է, որ «Հայբիզնեսբանկ»-ի Սեւանի մասնաճյուղում իր քարտի հաշվեհամարին օգոստոսին փոխանցվել է երկու հազար հարյուր դոլար, իսկ նոյեմբերի 2-ին անհայտ անձը համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ իր քարտից հանել է 1900 դոլար:

Դեկտեմբերի 9-ին ոստիկանության Մաշտոցի բաժին դիմած քաղաքացին հայտնում էր, որ գիշերը «Վիվառո» բուքմեյքերական կայքից համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ գողացել են 90 հազար դրամ:

Դեկտեմբերի 23-ին ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչություն էր դիմել մի սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն, եւ հայտնել, որ անհայտ անձը ապօրինի տիրացել է իրեն պատկանող կայքին եւ փոխելով տվյալները՝ իրեն զրկել է այն օգտագործելու հնարավորությունից:

Հունվարի 8-ին ոստիկանության Կենտրոնական բաժնում հաղորդում տված քաղաքացու բանկային քարտի հաշվից համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ հափշտակել էին երկու հարյուր հազար դրամ:

Նույն օրը հաղորդում տված երիտասարդը հայտնում էր, որ ինչ-որ մեկը իրեն անհայտ եղանակով փոխել է սոցիալական ցանցերում իր անհատական էջերի գաղտնաբառերը՝ զրկելով իրեն հասանելիությունից:

Հունվարի 30-ին ոստիկանության Կենտրոնական բաժին դիմած տղամարդը հայտնում էր, որ հունվարի 26-ից 27-ն ընկած ժամանակահատվածում Ամիրյան փողոցի խաղասրահում իր «Տոտոգեյմինգ» խաղային հաշվից, համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ, ոմն Լյով կանխիկացրել է մեկ միլիոն 450 հազար դրամ:

Ներկայացված համակարգչային հանցագործությունների բոլոր դեպքերով ոստիկանությունում նյութեր են նախապատրաստվում, ձեռնարկվում են անհրաժեշտ միջոցառումներ՝ ապօրինությունները կատարողներին հայտնաբերելու ուղղությամբ:

Տեղեկատվական բարձր տեխնոլոգիաներն այսօր մուտք են գործել տնտեսության գրեթե բոլոր բնագավառները, սոցիալական ցանցերից օգտվում են միլիոնավոր մարդիկ, ավտոմատացվում են արտադրական գործընթացներ, կառավարման համակարգեր: Սա մարդկության մեծագույն նվաճումներից է: Բայցեւայնպես, հարկ է իմանալ նաեւ հնարավոր տհաճ անակնկալների մասին, որոնք կարող են սպառնալ վիրտուալ աշխարհում: Մարդկության նվաճումը մարդու դեմ կիրառողները, սակայն, պետք է գիտակցեն, որ իրենց ապօրինի գործողությունները բացահայտելը եթե ոչ դյուրին, ապա անհնար չէ:

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

Թմրամիջոց՝ իրավապահ գաղտնի գործակալ

Հունվարին ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության թմրամիջոցների անօրինական շրջանառության դեմ պայքարի վարչության եւ պետական եկամուտների կոմիտեի աշխատակիցների համատեղ միջոցառումների արդյունքում տեղեկություններ էին ստացվել, որ «Հայփոստ» ՓԲԸ միջոցով, Գերմանիայից ոմն Արդա Առաքելյան երեւանի բնակիչ Սոնա Ավագյանին ուղարկել է սուբուտեքս թմրամիջոց:

Առաքանու զննման արդյունքում հայտնաբերվեցին պոլիէթիլենային փաթեթներով 279 ամբողջական եւ 4 մասնատված սպիտակ, օվալաձեւ հաբեր: Փորձաքննությամբ պարզվեց, որ հաբերի բաղադրության մեջ առկա է բուպրենորֆին թմրամիջոց:

Դարուցված քրեական գործի շրջանակներում իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում, փետրվարի 2-ին Երեւանի Սեբաստիայի փողոցից Սոնա Ավագյանը եւ Հասմիկ Կարապետյանը բերման ենթարկվեցին:

Պարզվեց, որ Սոնա Ավագյանն իր անվամբ ուղարկված թմրամիջոցը պետք է փոխանցեր Հասմիկ Կարապետյանին:

Ձեռնարկվում են միջոցառումներ առաքողի՝ Արդա Առաքելյանի ինքնությունը պարզելու ուղղությամբ:

Նախաքննությունը շարունակվում է:

Գոռ ՎԱՆՅԱՆ

Մի պարկ՝ թմրամիջոց

Ոստիկանության Անիի բաժնի ծառայողներն ապօրինի թմրաշրջանառության վերաբերյալ տեղեկություններ էին ստացել: Փետրվարի 6-ին հետաքննության բաժանմունքում քրեական գործ հարուցվեց: Ոստիկանության Անիի բաժնի ծառայողները, դատարանի որոշմամբ, խուզարկեցին Շիրակի մարզի Սառնաղբյուր գյուղի տներից մեկը եւ օժանդակ շինությունները:

Տան փանիքում ոստիկանները հայտնաբերեցին պոլիէթիլենային փոպրակով ու պարկով մանրացված, չորացված, յուրահատուկ հոտով կանեփանման զանգված՝ 2 կգ 300 գրամից ավելի քաշով: Հայտնաբերվեցին նաեւ արմատներով եւ առանց արմատների կանեփանման բույսեր՝ մոտ 300 գրամ քաշով:

54-ամյա բնակարանատեր Հայկազ Մարտիրոսյանը հայտնեց. որ հայտնաբերվածը նախորդ տարի քաղել է հողամասում վայրի աճած կանեփի բույսերից:

Ոստիկանության Անիի բաժնում հարուցված քրեական գործն ուղարկվել է տարածքային նախաքննական մարմնին:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

Բացահայտում են վաղարշապատի ոստիկանները

Փետրվարի 2-ին ոստիկանության Վաղարշապատի բաժնում գողության վերաբերյալ ահազանգ ստացվեց: Աղավնատուն գյուղի մի բնակիչ հայտնում էր, որ ավտոտնակից գողացել են աշխատանքային գործիքներ, զոդման եւ էլեկտրական սարքեր: Դեպքի վայր մեկնած ոստիկանները պարզեցին, որ ավտոտնակի դարպասը բացել էին տեխնիկական միջոցների գործադրմամբ:

Դեռեւս 2018 թվականի ապրիլ-մայիսից Վաղարշապատի ոստիկանությունում Աղավնատուն գյուղի տարածքում գողության վերաբերյալ ահազանգեր էին ստացվել: Էլեկտրասնուցման ենթակայաններից գողացել էին բջջային օպերատորների ծածկույթն ապահովող աշտարակների թանկարժեք մալուխները, նաեւ կտրել ու տարել էին տարբեր երկարության մալուխ. մի անգամ՝ 10 մետր, հետո՝ 40, մեկ այլ անգամ՝ 100 մետր...

Ստացվել էին նաեւ գյուղի առանձնատներից գողությունների վերաբերյալ ահազանգեր: Մաթեւոսյան փողոցի տներից մեկից գողացել էին սառնարան, լվացքի մեքենա, ջրատաքացուցիչ, կենցաղային այլ իրեր: Երիտասարդական փողոցի տներից մեկի օժանդակ շինության մուտքի դռան կախովի կողպեքը կոտրել էին ու գողացել հաստոցներ, եռաֆազ հոսանքի հաշվիչ ու պոմպեր:

Գողության բոլոր դեպքերով հարուցվել էին քրեական գործեր:

Քրեական հետախույզների ձեռնարկած միջոցառումների արդյունքում օպերատիվ տեղեկություններ էին ստացվում հանցագործությունները կատարած հնարավոր անձանց վերաբերյալ: Ուսումնասիրվում էին բոլոր վարկածները: Ի վերջո, փետրվարի 7-ին, արդեն անհերքելի փաստերով զինված, քրեական հետախույզները բերման ենթարկեցին Աղավնածոր գյուղի մի բնակչի, որի տվյալները, նախաքննության շահերից ելնելով, չենք ներկայացնում: Նա խոստովանել է, որ նախկինում եւս կատարել է գողություններ Արմավիրի մարզի Ծիածան, Արշալույս, Խորոնք, Ամբերդ եւ այլ գյուղերից:

Վաղարշապատի ոստիկանների ջանքերով գողոնի մի մասը հայտնաբերվել է:

Քննությունը շարունակվում է:

Էրիկ ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

1. Ֆինանսաբյուջետային վարչության հաշվապահական հաշվառման եւ հաշվետվությունների բաժնի առաջատար մասնագետ (ծածկագիր՝ 03-Հ-3.2-5):

Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է բաժնի գործառույթներից բխող հիմնախնդիրների լուծմանը եւ որոշումների ընդունմանը: Իրականացնում է բաժնի գործառույթներից բխող աշխատանքները եւ պատասխանատու է դրանց ժամանակին ու որակյալ կատարման համար, բաժնի պետի հանձնարարությամբ իրականացնում է ոստիկանության գործունեության կոնկրետ ոլորտի հաշվառման հետ կապված աշխատանքները, իրականացնում է դրամարկղային գործարքների գրանցում, մշակում, օրագիր օրդերների համակարգում, ապրանքանյութական արժեքների մուտքերի գրանցում, պարտքերի հաշվառում: Իր լիազորությունների շրջանակներում, ինչպես նաեւ բաժնի պետի հանձնարարությամբ նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր եւ այլ գրություններ:

Իրականացնում է պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

• տնտեսագիտություն եւ կառավարում (080000) մասնագիտություններով բարձրագույն կրթություն, քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոններում կամ քաղաքացիական ծառայության կամ համայնքային ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ՝ ՀՀ համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների եւ ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ,

• նշված պաշտոնի անձնագրում նշված լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաեւ տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում,

• համակարգչով եւ ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն, տիրապետում է (կարդում եւ կարող է բացատրվել) ռուսերեն լեզվին: .

Մրցույթը կկայանա 26.03.2019 թ., ժամը 10.00-ին, ոստիկանության շենքում՝ ք. Երեւան, Նալբանդյան 130:

2. Անձնագրային եւ վիզաների վարչության քաղաքացիության բաժնի առաջատար մասնագետ (ծածկագիր՝ 03-Հ-3.2-353):

Իրականացնում է բաժնի գործառույթներից բխող աշխատանքները եւ պատասխանատու է դրանց ժամանակին ու որակյալ կատարման համար, կազմում եւ վարում ՀՀ քաղաքացիություն ստանալու, ՀՀ քաղաքացիությունը դադարեցնելու վերաբերյալ գործերը, կազմում է եզրակացություններ եւ զեկուցում բաժնի պետին, համագործակցում է ՀՀ արտաքին գործերի նախարարության, ՀՀ ազգային անվտանգության ծառայության, ՀՀ ոստիկանության Ինտերպոլի ԱԿԲ-ի եւ ինֆորմացիոն կենտրոնի քաղաքացիության հարցերով զբաղվող ստորաբաժանման աշխատակիցների հետ կազմված գործերի նյութերի եւ փաստաթղթերի անհարկի ուշացումները եւ այլ անճշտություններ բացառելու նպատակով, նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր եւ այլ գրություններ:

Իրականացնում է պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Մրցույթը կկայանա 27.03.2019 թ., ժամը 10.00-ին ոստիկանության շենքում՝ ք. Երեւան, Նալբանդյան 130:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

• բարձրագույն կրթություն, քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոններում կամ քաղաքացիական ծառայության կամ համայնքային ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ՝ ՀՀ համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների եւ ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ,

• նշված պաշտոնի անձնագրում նշված լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաեւ տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում,

• համակարգչով եւ ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն, տիրապետում է (ազատ կարդում է եւ կարող է բացատրվել) օտար լեզվի:

Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետեւյալ փաստաթղթերը՝

• գրավոր դիմում (տրվում է Հանձնաժողովի անունով՝ նշելով այն պաշտոնը, որին հավակնում է դիմորդը),

• քաղաքացիական հատուկ ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով այդ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների եւ աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի պատճենները՝ բնօրինակների հետ,

• տեղեկանք այն մասին, որ իր մոտ առկա չէ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թ. դեկտեմբերի 15-ի «Հանրային ծառայության պաշտոնի նշանակվելու դեպքում լիազորությունների իրականացմանը, ինչպես նաեւ ուսումնական հաստատություններում մանկավարժական կամ վարչական գործունեությանը խոչընդոտող հիվանդությունների ցանկը հաստատելու եւ Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունիսի 27-ի N 908-Ն եւ 2005 թվականի մարտի 3-ի N 310-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1801-Ն որոշմամբ հաստատված հավելվածում ընդգրկված հիվանդություններից որեւէ մեկը,

• հայտարարություն այն մասին, որ ապագա աշխատանքը կապված չէ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր եւ քույր) քաղաքացիական ծառայողի նկատմամբ անմիջական ենթակայության կամ վերահսկողության հետ,

• հայտարարություն՝ տվյալ պաշտոնի անձնագրով պահանջվող օտար լեզվի (լեզուների) տիրապետելու մասին,

• հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

• հայտարարություն այն մասին, որ ինքը չի դատապարտվել հանցագործության համար, կամ դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված է,

• արական սեռի անձինք ներկայացնում են նաեւ զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին,

• 2 լուսանկար՝ 3 x 4 սմ չափսի,

• անձնագրի պատճենը:

ՀՀ քաղաքացին մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր (նույնականացման քարտ):

Փաստաթղթերն ընդունվում են միայն աշխատանքային օրերին՝ ժամը 9.30-ից մինչեւ 12.30-ը:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է մարտի 15-ը:

ՀՀ քաղաքացիները ոստիկանությունում քաղաքացիական հատուկ ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար կարող են դիմել ոստիկանության կադրային քաղաքականության վարչության քաղաքացիական հատուկ ծառայության անձնակազմի կառավարման բաժին՝ 306 կամ 313 սենյակ:

Հասցեն՝ Երեւան 0025, Նալբանդյան 130:

Հեռ.՝ (011) 52-83-74 (ներքին՝ 54-46), (010) 59-66-85 (ներքին՝ 56-85), (010) 59-64-56 (ներքին՝ 54-56):

ՀՀ ոստիկանության քաղաքացիական հատուկ ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մշտական մրցութային հանձնաժողովը հայտարարում է մրցույթ՝ ՀՀ ոստիկանության քաղաքացիական հատուկ ծառայության հետեւյալ թափուր պաշտոնները զբաղեցնելու մասին

Սկիզբը՝ նախորդ համարում

Չոռ չդառնալու վտանգաւոր թյուն

Որպես անդրազգային հանցագործություն՝ թրաֆիքինգի հակազդումը առանձին երկրների իրավապահ մարմինների խնդիր լինելուց զատ, նաեւ համընդհանուր մտահոգության առարկա է, ուստի այս առումով առկա է տարբեր երկրների իրավապահ կառույցների սերտ համագործակցությունը, ինչը դրական արդյունք է արձանագրում՝ օպերատիվ տեղեկատվության փոխանակումից մինչեւ համատեղ միջոցառումների իրականացում: Որպես ասվածի ապացույց նշենք, օրինակ, հետեւյալ փաստը. օգտագործելով Ինտերպոլի ուղիները՝ մեր իրավապահներին հաջողվեց Թուրքիայից Հայաստան արտահանձնել թրաֆիքինգի համար միջազգային հետախուզման մեջ գտնվող ՀՀ քաղաքացուն: Նրա նկատմամբ հարուցված քրեական գործի նախաքննության եւ դատաքննության փուլերն ավարտվել են, եւ նա այժմ պատիժ է կրում:

Քրեական օրենսգրքի 132 եւ 132[1] հոդվածներով առաջադրված մեղադրանքով պատիժ են կրում նաեւ երեք կանանց Հայաստանում հավաքագրած եւ Միացյալ Էմիրություններ փոխադրած երկու անձինք:

Թրաֆիքինգի դեմ պայքարը որքան էլ հետեւողական է, այնուամենայնիվ, արդյունքը դեռ հեռու է ցանկալիից: Պատճառներից մեկն էլ, թերեւս, այն է, որ զոհերը հաճախ կամովի են զոհ դառնում, ու հանցագործությունը դառնում է լատենտային: Այսպես, օրինակ, կամովի զոհի կարգավիճակում էին հայտնվել վանածորցի երկու ընկերուհիներ: Այսօր արդեն «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում պատիժ կրող Արմինե Գ.-ն նրանց հավատացրել էր, թե Կահիրեում ապրող քույրը կարի արտադրամաս ունի, եւ բարձր վարձատրվող աշխատանք էր առաջարկել այնտեղ: Աղջիկները համաձայնել էին, մանավանդ, որ ճանապարհածախսը իրենք չէին հոգալու: Արմինեն վերցրել էր նրանց անձնագրերը եւ խոստացել, որ մի քանի օրից մեկնելու գործը կդասավորի: Իսկ մեկնելուց առաջ բացել էր խաղաքարտերը. մեկնելու էին ոչ թե Կահիրե, այլ Դուբայ, ոչ թե աշխատելու էին կարի արտադրամասում, այլ զբաղվելու էին մարմնավաճառությամբ: Իսկ անակնկալի եկած աղջիկների վրդովմունքին պատասխանել էր՝ ո՞վ կիմանա՝ Դուբայում ինչով են զբաղվել, կարեւորը՝ կլորիկ գումարով կվերադառնան Հայաստան, իր քույրն էլ, որ Դուբայում ռեստորանի տեր է, սկզբում մարմնավաճառությամբ է զբաղվել:

Կարո՞ղ էին աղջիկները հրաժարվել Դուբայ մեկնելուց: Իհարկե: Կարող էին նաեւ ոստիկանություն դիմել, եթե անձնագրերը վերադարձնելու հետ կապված խնդիր առաջանար: Փոխարենը՝ մեկնեցին Դուբայ ու մի քանի ամիս ենթարկվեցին սեռական շահագործման: Արմինեի քրոջ «հարեմից» ազատվեցին, երբ հարմար առիթից օգտվելով՝ դիմեցին տեղի ոստիկանության աշխատակիցներին, ապա երկու շաբաթ մեկուսարանում մնալուց հետո վերադարձան Հայաստան: Այստեղ արդեն ստիպված էին հաղորդում տալ ու հարուցված քրեական գործով անցնել որպես տուժող:

Մարդու թրաֆիքինգի կամ շահագործման դեպքերի բացահայտման ուղղությամբ ոստիկանությունը, համագործակցելով միջազգային տարբեր կառույցների ու իրավապահ մարմինների հետ, լուրջ աշխատանքներ է կատարում: Հավելենք՝ թրաֆիքինգի զոհ չդառնալու համար պետք է զգոն ու զգուշավոր լինել, հետեւել մի քանի պարզ կանոնների, օրինակ, անձը հաստատող փաստաթղթերը չտալ այլ մարդկանց, անվերապահորեն չհավատալ այլ երկրում բարձր վարձատրությամբ աշխատանք առաջարկողներին, ունենալ վերադարձի ճանապարհածախս:

Իրազեկված լինելը զոհ չդառնալու ամենակարճ ճանապարհն է:

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

Թրաֆիքինգի զոհ կարող է լինել ցանկացած անձ՝ ե՛ւ տղամարդ, ե՛ւ կին, ե՛ւ երեխա: Նշանակություն չունի ո՛չ տարիքը, ո՛չ սեռը, ո՛չ ազգությունը եւ ո՛չ էլ այլ հանգամանքները: Սակայն առավել խոցելի խմբերն են՝

- *միայնակ, այրի կամ ամուսնալուծված կանայք,*
- *կրթություն, հմտություններ, աշխատանք գտնելու համար անհրաժեշտ միջոցներ չունեցող կանայք, երիտասարդ աղջիկները,*
- *սոցիալական ծանր վիճակում հայտնված, ընտանիքի կենսապահովման սահմանափակ հնարավորություններ ունեցող անձինք,*
- *թրաֆիքինգի մասին անտեղյակ կամ քիչ տեղեկացված անձինք,*
- *անօթեւան, թափառական կամ հսկողությունից դուրս գտնվող երեխաները,*
- *ընտանեկան բռնություններից, ճնշումներից եւ այլ բախումներից խուսափող անձինք:*

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Հ. Իսակով / Բյուզանդիա
Պատմական մարզ, Ֆրանսիա
Դաշնամուրի մաս / Քաղաք, Հնդկաստան
Քսենոփոն, երկ
Աքցանի տեսակ
Ֆրիդերիկ ... / Նպարեղեն
Դրամ, Լատվիա
Հոծ, սեղմ
Քիմիական տարր
Խառնաձին / Բայրոն, պոեմ
Զորք
... Օբրազցովա
Պայծառատես կին
Ջրազուրկ, բուսազուրկ տարածք
Սոկրատեսի աշակերտը
Վերջ
Գլխարկ / «Ֆաուստ», օպերա
Աշխարհամաս / Կուսակալ
... կոլա / Խոսքի մաս
Միրգ / Հռոմ. բնագետ, բժիշկ
Մանգո, նարինջ / Գերման. քաղաք
Սոճու պտուղ
Բարձունք
... Ամարա / Հայ ճարտարապետ
... Զոլա
... Պիեխա
Կեչազգի ծառ / ... Դարչինյան
Ցատկամուկ
«Խաղաղ ամերիկացին»
Լուսավորող սարք
Վիլյամ ...
Հարյուրակն հրեշ
Վարչկենտրոն, Կոլումբիա
Զիգմունդ ... / Ազդր
Արաբ աշխարհագրագետ / Երկանք
Ավստրալ. խոշոր թռչուն
... Բոլիվար
Այգեկցի, Կռիլով / Լեոնիդ ....
Բարակ ճյուղ
Կալսիչ / Իտալացի նկարիչ
Աստղ, Օրիոն համ. / Վատառողջ
Ջրային փոխադրամիջոց
Լուսնի աստվածուհի / Ազգանուն
Տուֆ
Բաբելոնյան աստված
Նեպտունի արբանյակ / Կահույք
Ռուս կինոդերասանուհի
Դերանուն / Թագավոր
Պումա, ընձառյուծ
Հանդիսավոր օր
Թշնամի
Բացասական իոն
Դեղ
Մաթեմ. երկանդամ
Մահադեղ / Անմշակ հողեր
Ապրանքի փաթեթավորման իր
... Կամսկի
Չյուդոյի գորգ
Էնտոնի ... / Հս. Դվինայի վտակ
Գիշեր
... Փիթ
«Ոսկե գնդակ-64»
«... և եւ նրա եղբայրները» / ՀՀ ֆուտ. թիմ
Բնատուրք / ... Մանշ / ... կինո
Ժառանգակիր
«Չորի ...ն» / ... Վեգաս
Մուրաբայի պտուղ / «...ը լեռան վրա»
Անցյալի անդրավարտիք
Պատ
Չինական դրամ / ... Բեռնես
Չաուշ, Արաբո
Անթացուպ
«Լոռեցի ...ն»
Քոչվորի կացարան

Ուշադրություն

Հարգելի քաղաքացիներ՝

ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչությունը երաշխավորում է ձեր բնակարանների եւ ամառանոցների անվտանգությունը, եթե դրանց պահպանությունը վստահեք ձեր բնակության վայրի պահպանության ստորաբաժանմանը:

Պահպանության համար գանձվելիք վարձավճարները անհամեմատ մատչելի են:

Մինչեւ 120ք/մ մակերես ունեցող բնակարանների, տների, ամառանոցների տեխնիկական միջոցների տեղադրման աշխատանքները կկատարվեն անվճար, իսկ պահպանության ամսական վարձավճարները կկազմեն 5000-15000 դրամ:

120 ք/մ-ից ավելի մակերես ունեցող տարածքների համար պահպանության ամսական վարձավճարները կկազմեն 10000-30000 դրամ:

Մանրամասների համար կարող եք զանգահարել 57-19-22 (Կենտրոն համայնք), 39-00-26 (Մալաթիա համայնք), 57-02-14 (Էրեբունու համայնք), 35-14-21 (Մաշտոց համայնք), 63-05-74 (Նոր Նորք համայնք), 44-21-23 (Շենգավիթ համայնք), 23-82-00 (Արաբկիր համայնք), 24-10-41 (Քանաքեռ-Զեյթուն համայնք):

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Աստղագուշակ

22.02 - 28.02

Խոյ - Դուք հաջողության կհասնեք, եթե չլսեք օտար մարդկանց խորհուրդները:

Ցուլ - Ձեր հմայքի շնորհիվ կկարողանաք հաստատել նոր ծանոթություններ, արժանանալ մարդկանց համակրանքին:

Երկվորյակ - Ծանոթություններում անհրաժեշտ է զգուշություն: Հակված եք հավատալու առաջին տպավորությանը, ինչը խաբուսիկ է լինելու:

Խեցգետին - Մեծ նշանակություն եք տալու Ձեր ռոմանտիկ երեւակայությանը, երազանքներին, իսկ իրականության մասին նույնիսկ չեք մտածի:

Առյուծ - Ձեզնից շատերը լուրջ կսիրահարվեն, եւ այդ հարաբերությունները կզարգանան մեծ արագությամբ:

Կույս - Նույնիսկ ամենաբարդ իրավիճակներում կպահպանեք Ձեր լավատեսությունը, ինչը կփոխանցվի նաեւ մյուսներին:

Կշեռք - Անձնական կյանքում խնդիրներ չեն առաջանա, հնարավոր են միայն մանր թյուրիմացություններ, որոնք կշտկվեն:

Կարիճ - Շաբաթը բարենպաստ է ինչպես գործնական, այնպես էլ ռոմանտիկ ծանոթությունների համար:

Աղեղնավոր - Շաբաթը այնքան էլ վատը չի լինելու, սակայն սիրելիի հետ հարաբերություններում կարող են խնդիրներ ծագել:

Այծեղջյուր - Սովորականից ավելի զգացմունքային եք լինելու, եւ սիրելիի հետ հարաբերություններում շատ բաներ չափազանց սրտին մոտ կընդունեք:

Ջրհոս - Հնարավոր են ծանոթություններ, որոնք օգտակար կգտնվեն նաեւ գործնական տեսակետից: Իսկ անձնական կյանքը հետին պլան կմղվի:

Ձուկ - Շաբաթը լավ կլինի ընտանեկան խնդիրների քննարկման, լուծման եւ ցանկացած նախագծի համար:

Փորձեք լուծել

Խնդիր N1



Սպիտակները սկսում են եւ հաղթում 2 քայլից

Խնդիր N2



Սպիտակները սկսում են եւ հաղթում 3 քայլից

Նախորդ խնդիրների պատասխանները

Խնդիր N1 1.c3-d4 g3:c3 2.d2:h6x

Խնդիր N2 1.g5-f6 e7:g5 2.c3-d4 e5:c3 3.c3:f8x

Պատրաստեց
Նշան ԱԼԱՎԵՐԴՅԱՆԸ
Շաշկու Հայաստանի չեմպիոն, IDF վարպետ, սպորտի վարպետ

Նախորդ համարի սկանվորդի պատասխանները

«02 շաբաթաթերթ» ՓԲԸ: Հասցեն՝ Նալբանդյան-130: Հեռ. 56-00-05, 54-81-52, 59-67-75 (հաշվապահություն): Համարի թողարկման պատասխանատու՝ Ն. Աթաբեկյան:
Գրանցման վկայական՝ 27312002739: Տրվել է՝ 13.03.2000 թ.: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 21.02.2019 թ., ժ. 17.00-ին: Տպաքանակը՝ 6950:
Համակարգչային շարվածքը՝ «02» շաբաթաթերթի: Տպագրվել է «Հենակետ» ՓԲԸ տպարանում: Հղումը «02»-ին պարտադիր է:
Չպատվիրված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում: Խմբագրությունը հեղինակների հետ գրագրություն չի վարում: Գովազդի պատասխանատուն պատվիրատուն է: